789 Ով Տեր Հիսուս, անսուտ բերնովդ

1. Ով Տեր Հիսուս, անսուտ բերնովդ
Դու խոսք տվեցիր մեզի,
Թե՝ ես կերթամ Իմ Հորս քով,
Տեղ պատրաստելու ձեզի:
Ու ես ուր որ պիտի երթամ,
Դուք էլ այնտեղ գաք պիտի,
Ով Տեր Հիսուս, երբ գաս այնժամ,
Դու այնտեղ տեղ տուր ինձի:

2. Սրբոց հետ հոն ուրախանանք
Անճառ Քո ուրախությամբ,
Հոն Քո առջև հանգստանանք՝
Քո անհուն խաղաղությամբ:
Արի՛ Հիսուս, բարի՛ Հիսուս,
Կարոտել ենք Քո ջրին,
Դու՝ Արարիչ Աստծո Որդի,
Քեզ լինի փառք հավիտյան:

3. Հոն արդարները կփայլեն
Գլուխնին՝ թագ լուսեղեն,
Անհաղթ սիրովդ կզմայլվեն
Եվ, Տեր, Քեզ կօրհնեն ընդմիշտ:
Այնտեղ բնավ մեղք չի մտնի
Մեր Հոգուն ցավեր տալու,
Ողբ չի լսվի, սուգ չի լինի,
Քո սիրով ենք լեցվելու: